# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ **2010** ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Գլխավոր վարչության պետի հրամանով հաստատվել է Գլխավոր վարչության 2010 թվականի գործունեությունն ապահովող միջոցառումների ծրագիր, որը ներառել է ինչպես Գլխավոր վարչության խնդիրներից և գործառույթներից բխող միջոցառումներն, այնպես էլ բնագավառը կարգավորող իրավական ակտերի մշակման ժամանակացույցը:

Հաշվետու տարում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ Գլխավոր վարչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Գլխավոր վարչության պատվիրակությունը մասնակցել է ԻԿԱՕ կողմից կազմակերպված «Օդային հաղորդակցությունների շուրջ բանակցությունների կոնֆերանս»-ին, որի շրջանակներում բանակցություններ է ունեցել Քուվեյթի Պետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի Թագավորության, Իսլանդիայի և Իսպանիայի Թագավորության քաղաքացիական ավիացիոն իշխանությունների հետ: Խորհրդակցությունների արդյունքներով կազմվել են Փոխըմբռնման հուշագրեր և նախաստորագրվել են Համաձայնագրերի անգլերեն տեքստերի նախագծերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսպանիայի Թագավորության միջև օդային տրանսպորտի մասին» համաձայնագիրն արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն ու ներկայումս պատրաստ է ստորագրման:

Ստորագրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության և Սլովակիայի Հանրապետության ու Չեխիայի Հանրապետության կառավարությունների միջև օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրեր: Լրամշակվել և փոխհամաձայնեցվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը: Ուսումնասիրվել և ընթացք են տրվել Քուվեյթի, Թունիսի, Սերբիայի, Տաջիկստանի և Թուրքմենստանի կառավարությունների հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի նախագծերին:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2010 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին:

Եվրամիության պատվիրակության կողմից հավանության է արժանացել Եվրոպական Միության անդամ-երկրներին շրջանառված «Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների զարգացում համընդհանուր ավիացիոն պահանջները և Եվրոպական Միության

ավիացիոն անվտանգության կանոնակարգերը կիրառելու նպատակով» «Թվինինգ» ծրագիրը և աշխատանքային պայմանագիրը նախատեսվում է ստորագրել 2011 թվականի հունվար ամսին, որից հետո անմիջապես «Թվինինգ» ծրագիրը կմեկնարկվի:

Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում 2009-2011թթ. իրականացվելիք գերակա խնդիրների և առաջնահերթ միջոցառումների մասով 2010 թվականի ընթացքում Գլխավոր վարչության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները`

*1. Հայաստանի Հանրապետության կառավարության և ԵՄ միջև ավիացիայի ոլորտի կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ համագործակցության խորացում, ներառյալ շուկամուտք գործելը.*

*2. Ավիացիոն անվտանգության ոլորտում համագործակցություն.*

*3. Թռիչքային անվտանգության գծով եվրոպական ավիացիոն կազմակերպությունների (JAA/EASA) կանոնների ներդրում և կիրառում.*

Գլխավոր վարչությունը թռիչքների անվտանգության մակարդակի բարձրացման և թռիչքային պիտանիության հարցերով շարունակել է համագործակցությունը միջազգային և օդանավ արտադրող կազմակերպությունների հետ:

2010 թվականին շարունակվել է համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև` համաձայն որի ծրագրվում է պատրաստել օդաչուներ: Ուսուցման գործընթացը կազմակերպվելու է ինչպես մասնավոր, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության պետբյուջեի ֆինանսավորմամբ:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված են:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ` աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Ձմեռային շրջանում պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աերոդրոմային միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:

2010թ. վերահսկողություն է իրականացվել «Արմավիա»-ին ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ ներդրումային պայմանագրի» դրույթների կատարման նկատմամբ: «Արմավիա» ավիաընկերության ուղևորափոխադրումների ծավալը աճել է 7,85%-ով` փոխադրելով 767.7 հազար ուղևոր: Նման ցուցանիշները, առաջին հերթին, ապահովվել են ընկերության կողմից իրականացվող չվերթերի կանոնավորության պահպանման և արևմտյան արտադրության օդանավերի շահագործման շնորհիվ:

2010թ. ընթացքում Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 4070 գրությունների:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2010թ. փոփոխվել են թվով 2 պաշտոնի անձնագրեր: Կազմակերպվել է 1 մրցույթ,

որի արդյունքում համալրվել է թափուր պաշտոնը: Առեստավորվել է 7 և վերապատրաստվել 15 քաղաքացիական ծառայող: Հարցաշարերում կատարվել են փոփոխություններ՝ դրանք համապատասխանեցնելով ընդունված օրենսդրական ակտերին:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով ակտիվ համագործակցել է ԶԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխություններն ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

2010թ. ընթացքում մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության Վարչապետի կողմից հաստատվել են թվով 8 նորմատիվային, անհատական որոշումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և պետական գրանցում են ստացել թվով 18 նորմատիվ իրավական ակտեր:

## ԹՌԻՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է **40** օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրից հանվել է **7** օդանավ: Տրվել են քաղաքացիական օդանավի գրանցման 66, քաղաքացիական օդանավի ապագրանցման 7, քաղաքացիական օդանավի պիտանիության 91 և օդանավի աղմուկի 67 սերտիֆիկատներ, ինչպես նաև օդանավի ռադիոկայանի 104 վկայական ու օդանավի թռիչքի 19 թույլտվություն:

Գլխավոր վարչության մասնագետները կատարել են օտարերկրյա օդանավի **2** միջադեպի հետ կապված նախնական գործողությունները՝ մինչ հիմնական քննության անցկացումը և մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի հետ տեղի ունեցած թվով **3** միջադեպերի մասնագիտական քննություններին:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 68 տեսչական ստուգումներ կատարվել են Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում: Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել է օտարերկրյա օդանավերի թվով 46 ստուգումներ, համաձայն SAFA ծրագրի և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

Կատարվել են ավիաընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել են թվով 6 թույլտվություններ:

Գլխավոր վարչության կողմից կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների բազաների և գծային կայանների մի շարք ուսումնասիրություններ և սերտիֆիկացում Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում:

Գլխավոր վարչության մասնագետներն, որակավորման բարձրացման նպատակով, «TRACECA» ծրագրի շրջանակներում մասնակցել են «Թռիչքային պիտանիություն», «Մարդկային գործոնը տեխնիկական սպասարկման գործընթացում», «Թռիչքային շահագործում (OPS)» և «Աուդիտի մեթոդաբանությունը» թեմաներով դասընթացներին, շրջակա

միջազգային, ՄԱԿ-ի և ԻԿԱՕ-ի կողմից կազմակերպված թռիչքների անվտանգության համաշխարհային քարտեզին նվիրված սեմինարներին, ինչպես նաև SAFA ծրագրով տեսուչների վերապատրաստման դասընթացներին և կատարել JAA ուսումնական կենտրոնի աուդիտ:

## <u>ԹՌԻՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ</u>

Հայաստանի Հանրապետությունում գրանցված քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիությունը և թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով ***2010թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.***

- Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 52 վկայականներ ու 743 այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին և օդային երթևեկության կարգավարներին:
- Իրականացվել է Հայաստանի Հանրապետության ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման թվով 10 կազմակերպությունների սերտիֆիկացում:
- Ըստ հայտերի մշակվել և շահագործողներին տրամադրվել է թվով 21 օդանավերի 24-ր հիտանոց հասցեներ:
- Տրամադրվել է օդանավերի RNAV գոնալ նավիգացիայի համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 40 և RVSM համակարգում թռիչքներ իրականացնելու թվով 17 թույլտվություններ, կատարվել ELT վթարային թվով 29 ռադիոփարոսների գրանցում ԿՈՍՊԱՍ-ՍԱՐՍԱՏ համակարգում:
- Իրականացվել է արտասահմանում շահագործվող Հայաստանի Հանրապետության գրանցում ունեցող ինքնաթիռների թռիչքային պիտանիության ապահովման թվով 16 և օդանավերի տեխնիկական սպասարկման ծրագրերի, դրանց լրացումների ու փոփոխությունների (թվով՝ 30) վերահսկողություն:
- Իրականացվել է Ավիաընկերությունների տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների թվով 30 տեսչական շահագործողական ստուգումներ:
- Իրականացվել են թռիչքավարության, կարգի բարձրացման և ինքնուրույն աշխատանքների թույլտվության ստուգողական թռիչքներ:
- Ապահովվել է օդանավերի թռիչքային պիտանիության վկայականների ժամկետների երկարաձգման թվով 29 հայտերի քննարկումն ու համապատասխան եզրակացությունների տրամադրումը:

***Մշակվել է.***

1. Գլխավոր վարչության թռիչքային պիտանիության դիրեկտիվներ և հսկողություն իրականացվել դրանց կատարման նկատմամբ:
2. JAR-21, 39, 66, 145, 147, JAR-M և JAR-MMEL/MEL փաստաթղթերի կիրառման ընթացակարգերի նախագծեր:
3. Թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպության փաստաթղթեր ձեռնարկ, ինժեներատեխնիկական կազմակերպությունների սերտիֆիկացման փաստաթղթերի փաթեթի հայերեն տարբերակ:
4. Ինժեներատեխնիկական կազմակերպությունների նոր սերտիֆիկատներ և հին սերտիֆիկատները փոխարինվել նորերով:
5. Օդանավերի թռիչքային պիտանիության տեսչական ստուգումների ժամանակացույց:

6. Համաձայն JAR-39 թռիչքային պիտանիության դիրեկտիվների՝ հաշվառման, կիրառման և հաշվետվության փաստաթղթեր:
7. Հայաստանի Հանրապետությունում «Փոքր ավիացիայի կանոններ» («ՓԱԿ-1 ինքնաթիռներ» և «ՓԱԿ-3 ուղղաթիռներ») կարգը:

*Որակավորման բարձրացման նպատակով* Գլխավոր վարչության աշխատակիցները մասնակցել են ՏՐԱՍԵԿԱ, ՄԱԻ և ԵԱՍԱ ստանդարտների, ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ-ի «Մարդկային գործոնը ավիացիայում» թեմայով դասընթացներին:

- ԹԳՎ աշխատակիցները թեստավորման եղանակով մասնակցել են «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ում կազմակերպված անգլերեն լեզվի իմացության մակարդակի ատեստավորմանը:

## ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ

***Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.***

1. Մշակվել և հաստատվել է «Օդային երթևեկության կազմակերպման, աերոնավիգացիոն կապ և դիտարկում իրականացնող և աերոնավիգացիոն տեղեկատվական ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության վերահսկողության իրականացման ուղեցույց»:
2. Մշակվել և հաստատվել է «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ 2010 թվականի Աուդիտի ծրագիրը և դրա շրջանակներում մշակվել են աուդիտի հարցաթերթիկներ ու իրականացվել աուդիտ:
3. Մշակվել և հաստատվել են սերտիֆիկացված օդանավակայանների աերոդրոմների, վերգետնյա միջոցների և ծառայությունների վերահսկողության հսկիչ թերթիկները:
4. Գերակա խնդիրների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Գեոդեզիայի և քարտեզագրման ինստիտուտի մասնագիտների հետ մշակվել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի տեղանքի թվային բազայի և Հայաստանի Հանրապետության փոքր ավիացիայի թռիչքների իրականացման ապահովման նպատակով ավիացիոն քարտեզներ:
5. Ուսումնասիրվել և եզրակացություններ են տրվել Հայաստանի Հանրապետության տարածքի տարբեր մարզերում բջջային հեռախոսակապի ալեհավաք կայմերի (ընդհանուր թվով 38 կայմ) տեղադրման վերաբերյալ:
6. IMAC կազմակերպության ներկայացուցչի հետ համատեղ ուսումնասիրվել և քննարկվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կառուցվող Հալիձոր-Տաթև ճոպանուղու նախագիծը (հենային աշտարակների տեղադրման կետերը, դրանց բարձրությունները):
7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N825-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության օդային տարածքի կազմակերպման կարգով» սահմանված դրույթների ապահովման նպատակով մշակվել և Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարությանը, Արարատի, Արմավիրի և Շիրակի մարզպետներին տրամադրվել են «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների աերոդրոմների շրջանի տիրույթների քարտեզների և սահմանված գոտիների գծապատկերների էլեկտրոնային տարբերակները:
8. «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել են «Զվարթնոց» օդանավակայանի

աերոդրոմի տարրերի («C», «D» ղեկուղիներ և մայրուղի) վերանորոգման աշխատանքների ծավալները:

9. Ապահովվել է Եվրոկոնտրոլի կողմից իրականացված Աուդիտի գործընթացը և դրա արդյունքների հիման վրա մշակվել և կազմակերպությանն է ներկայացվել թերությունների վերացման ծրագիրը:
10. Հակակարկտային կայանների շահագործման խնդրի շրջանակներում ուսումնասիրվել են «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ և «Բարվա» ընկերության կողմից տեղադրված հակակարկտային կայանների աշխարհագրական դիրքերն օդային մայրուղիների նկատմամբ:
11. Ուսումնասիրվել և առաջարկություն է ներկայացվել «Արմավիա» և «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ընկերությունների միջև տեղեկատվական ցանցի ստեղծման վերաբերյալ:
12. «Զվարթնոց» օդանավակայանում և դրա շրջակայքում թռչունների հետ օդանավերի բախումները նվազեցնելու նպատակով մշակվել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արարատի մարզպետներին են ներկայացվել գրություններ՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N825-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների ապահովման հետ, մասնավորապես օդանավակայանի շրջանում աղբակույտերի վերացման վերաբերյալ:
13. Անցկացվել են տեսչական ստուգումներ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների աերոդրոմներում, «Զվարթնոց Հենդլինգ» ՓԲԸ-ում, ինչպես նաև ՀՀ ՊՆ «Էրեբունի» աերոդրոմում:
14. Գլխավոր վարչության երկու մասնագետներ վերապատրաստվել են Եվրոկոնտրոլի կողմից անցկացված «Աուդիտի անցկացման տեխնոլոգիաներ» դասընթացներին և ստացել հավաստագրեր:

## ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

***Օդային փոխադրումների կարգավորման և լիցենզավորման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.***

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողի սերտիֆիկատի և ավիափոխա-դրողի սերտիֆիկատի (մասնագրի) տրման կարգով» թվով 4 իրավաբանական անձանց տրվել է Շահագործողի սերտիֆիկատ, իսկ թվով 10 օդանավ շահագործողների համար երկարացվել է Շահագործողի սերտիֆիկատի գործողության ժամկետը, թվով 14 օդանավ շահագործողների տրվել է Ավիափոխադրողի Մասնագիր:

Համաձայն ներկայացված հայտերի, քննարկվել և հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և դեպի/ից Հայաստանի Հանրապետություն կանոնավոր չվերթեր իրականացնող օտարերկրյա ավիափոխադրողների Ամառ 2010 և Ձմեռ 2010/2011 չվացուցակները: Ըստ ներկայացված հայտերի քննարկվել և փոփոխություններ են կատարվել օտարերկրյա օդանավ շահագործողների Ամառ 2010 չվացուցակում:

Ներկայացված հայտերի համաձայն «Արմավիա»-Ավիաընկերություն» ՍՊԸ-ին և «Էյր Արմենիա» ՓԲԸ-ին տրամադրվել են միջազգային օդային ուղիներով կանոնավոր և չարտերային չվերթերի կատարման համապատասխան թույլտվություններ:

Իրականացվել է Հայաստանի Հանրապետություն/ից իրականացված չվերթերի, ուղևորահոսքերի փոխադրումների շուկայի ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ըստ փոխադրումների իրականացման տարածաշրջանների, երկրների և քաղաքների: Արդյունքում

իրականացվել է շուկայի կարգավորում՝ ըստ հաճախականությունների և օդանավերի տիպերի:
Կատարվել են Հայաստանի Հանրապետության և արտերկրի միջև օդային փոխադրումների շուկայի ամենամսյա վերլուծություններ ըստ տարածաշրջանների, այդ թվում՝ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպա, Մերձավոր և Միջին Արևելք, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Միջին Ասիա, Հարավային Կովկաս:
Ամսեկան կտրվածքով ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունից իրականացվող չվերթերի ավիատոմսերի սակագները՝ դրանք համադրելով նաև հարևան պետություններից՝ Վրաստան և Ադրբեջան, նույն օդային ուղիներով չվերթերի ավիատոմսերի սակագների հետ: Կատարվել է նաև Եվրոպայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի ներքին չվերթերի ավիափոխադրումների սակագների վերլուծություններ, դրանք համեմատելով Հայաստանի Հանրապետությունից կատարվող ավիափոխադրումների սակագների հետև հաշվարկվել թռիչքաժամերը:

## <u>ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ</u>

Ուսումնասիրվել և հաստատվել են «Զվարթնոց» օդանավակայանի և թվով 13 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը, ինչպես նաև օդանավերի անձնակազմերի անդամների ավիացիոն անվտանգության մասով ուսումնական ծրագրերը: ԻԿԱՕ «Անվտանգություն» N17 հավելվածի պահանջների համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են նաև օտարերկրյա թվով 18 ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը:
Մշակվել և շահագրգիռ գերատեսչություններին քննարկմանն է ներկայացվել «Հանրային առողջության համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդությունների միջազգային տարածման կանխմանը և համաճարակների բռնկմանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի պատրաստականության Ազգային ծրագիրը»:
2010 թվականի ընթացքում կազմակերպվել և անց է կացվել «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայանների ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատակիցների ատեստավորում (49 աշխատակից):
Ավիացիոն անվտանգության մասով տեսչական ստուգումներ են իրականացվել «Զվարթնոց» և «Շիրակ» օդանավակայաններում, որոնց արդյունքները ներկայացվել են «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ տնօրինությանը, բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացնելու համար:
Տեսչական ստուգում է անցկացվել նաև «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ-ում նավիգացիոն օբյեկտների պահպանության, դրանց մուտքի/ելքի վերահսկողության, օդանավերի դեմ ուղղված անօրինական միջամտության ակտերի դեպքերում օդային երթևեկության կառավարման կարգավարների գործողությունների կարգի վերաբերյալ:
Ավիացիոն անվտանգության մասով նախնական և կրկնակի վարապատրաստման ուսումնական դասընթացներ են անցկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ «Ուղևորների փոխադրումներ» և «Օդային երթևեկության կարգավարներ» մասնագիտությունների, ինչպես նաև «Արմավիա» ավիաընկերության բորտուղեկցորդների ծառայության ընդհանուր թվով 10 խմբերի 130 ուսանողների հետ:
Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 54 հայտեր, որոնցից 46 հայտերի մասով ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տալու վերաբերյալ, իսկ 8 հայտով ներկայացված

փոխադրման ենթակա վտանգավոր բեռները ԻԿԱՕ «Օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման տեխնիկական հրահանգով» սահմանված կարգով քաղաքացիական օդանավերով փոխադրումն արգելված լինելու պատճառով մերժվել է:
Քաղաքացիական ավիացիայի համակարգի ընկերություններում վթարափրկարարական ապահովման նպատակով կազմակերպվել են պարապմունքներ «Արմավիա», «Էյր Արմենիա» ավիաընկերությունների օդաչուական և ուղեկցող անձնակազմերի հետ, պարբերաբար ստուգվել են օդանավակայանների վթարափրկարարային հաշվարկների մարտունակությունը, օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքն ու հանդերձանքի վիճակը, «Զվարթնոց» օդանավակայանում կազմակերպվել են վթարափրկարարային խմբերի 18 փորձնական տագնապ:
2010 թվականի նոյեմբերի 1-ին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում օդանավակայանի վթարափրկարարական ծառայության և Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության վարչության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության հրամանատարաշտաբային ուսումնավարժանք «Հակառակորդի հանկարծակի հարձակման ժամանակ Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:
Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 62 Լիտեր «Ա» և 16 հատուկ չվերթերի սպասարկում:
ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում ավիացիոն անվտանգության մասով վերա-պատրաստվել են 5 աշխատակիցներ, «Զվարթնոց» օդանավակայանում ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում Գլխավոր վարչության կողմից կազմակերպված դասընթացներին՝ 7 աշխատակիցներ, քաղպաշտպանության աշխատանքների մասով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության ակադեմիայում վերապատրաստվել է 2 աշխատակից, Եվրամիության կողմից Երևանում կազմակերպված «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագիր» թեմայով սեմինարին՝ 1 աշխատակից:
2010 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

## <u>ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</u>

Գլխավոր վարչության համակարգի փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2010 թվականի ընթացքում ամբողջությամբ վճարվել են շահութաբաժինների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին ունեցած պարտավորությունները: Գլխավոր վարչության կողմից քննարկվել են օդանավակայանային ծառայությունների մատուցման սակագների փոփոխման հայտերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվել հաստատման ու հրապարակման:

## <u>«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ</u>

Ընկերության գործունեության զարգացման ծրագրերն կազմելիս կիրառվել է Եվրոկոնտրոլի կողմից մշակված մեթոդաբանությունը: Դրանք են.
- Եվրոկոնտրոլի կողմից սահմանված Եվրոպական պահանջների ներդրման ապահովման նպատակով՝ 2010-2014թթ. LCIP փաստաթղթի (զարգացման 5-ամյա

Եվրոպական ծրագրի) մշակման աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը,

- Ընկերության սերտիֆիկացման (գործունեության թույլտվություն ստանալու) նախապատրաստական աշխատանքների իականացման պլանի կազմումը և դրանց համակարգումը,
- Համաձայն ISO9001-2008 ստանդարտի պահանջների, ընկերությունում որակի կառավարման համակարգի ներդրման աշխատանքների պլանի, ներդրմանն առնչվող կազմակերպական, կառուցվածքային, համապատասխան ընթացակարգերի մշակման և դրանց ներդրման միջոցառումների իրականացումը,
- Ավարտվել է «TOKAI» փոփոխված համակարգի ամբողջական ներդրման աշխատանքները, որի արդյունքում հավաքագրվել է 2010 թվականին տեղ գտած բոլոր ավիացիոն իրադարձությունները:
- Ներդրվել է օդային երթևեկության կազմակերպման համակարգում անվտանգության վրա հնարավոր ներազդեցություն ունեցող փոփոխությունների դեպքերում առաջացող հնարավոր ռիսկերի գնահատման, այդ ռիսկերը մեղմելուն ուղղված միջոցառումների մշակման ու իրականացման ընթացակարգեր:
- Ընկերության մասնագետները ներգրավվել են Եվրոկոնտրոլի EVAIR ծրագրում՝ ավիացիոն իրադարձությունների առնչությամբ համապատասխան տեղեկատվության հավաքման և վերլուծության նպատակով:
- Եվրոկանտրոլի եվրոպական աերոնավիգացիոն տեղեկատվական բազայում (EAD) EAIS համակարգի տեղադրում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայանների մեկնման և ժամանման սխեմաների թվայնացում և մուտքագրում բազա:

*Կադրերի ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ իրականացվել են·*

- ՕԵԿ կարգավարների անգլերեն լեզվի ռուսուցման կազմակերպումը, այդ թվում՝ ընդհանուր և ավիացիոն անգլերեն լեզվի որակավորման բարձրացման 6 դասընթացներ անցկացումն ընկերությունում ընդհանուր թվով 54 կարգավարների և Միացյալ Թագավորության MLS ուսումնական կենտրոնում անգլերեն լեզվի որակավորման բարձացման դասընթացների կազմակերպումը 25 կարգավարների համար,
- Նեղ մասնագիտական ուղղություններով ուսուցման կազմակերպումը ՕԵԿ մասնագետների, կադրերի վերապատրաստման բաժնի աշխատակիցների, ՏԱ տնօրինության մասնագետների համար Եվրոկոնտրոլի նավիգացիայի ինստիտուտում (Լյուքսեմբուրգում) և վարժասարքի հրահանգչի ուսուցումը Պրահայում՝ 29 մարդ,
- Կադրերի վերապատրաստման բաժնի աշխատակիցների, ԱՏԾ աշխատակիցների և ՏԱ տնօրինության մասնագետների անգլերեն լեզվի ուսուցման կազմակերպումն ընկերության ներսում և Հայաստանի Ամերկյան համալսարանում:

## Ավիաուսումնական կենտրոն ՓԲԸ

Ավիաուսումնական կենտրոնի գործունեության հիմնական նպատակը քաղաքացիական ավիացիան բարձրորակ կադրերով համալրելն է, կրթական գործընթացն արտադրությանը մոտեցնելը, միջազգային ավիացիոն կազմակերպությունների և գործատուների պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստելը, որով և պայմանավորված է քաղաքացիական ավիացիայի անվտանգ և ապահով գործունեությունը:

Ուսուցման բարձր որակ ապահովելու համար համալրվել է Ավիաուսումնական կենտրոնի ուսումնատեխնիկական բազան, մշակվել են

նոր կրթական ծրագրեր, դրանք համապատասխանեցնելով Եվրոկոնտրոլի և ՄԱԻ պահանջներին:
Կենտրոնի հինգ դասախոսներ 2010 թվականին վերապատրաստվել են Կիևի ԻԿԱՕ-ի ինստիտուտում:
Ավիաուսումնական կենտրոնը 2010 թվականին իրականացրել է օդաչուական անձնակազմերի և օդային երթևեկության կարգավարների անգլերեն լեզվի իմացության և լեզվական հմտությունների թեստավորման գործընթացը՝ ԻԿԱՕ-ի պահանջներին համապատասխան:
2010 թվականին իրականացվել են 5 ուսանողների թռիչքային ծրագրով նախատեսված 446 ժամ ուսումնավարժանքային թռիչքներ վարձակալված DA-40 օդանավով:
2010-2011 ուսումնական տարում Ավիաուսումնական կենտրոնի քոլեջ են ընդունվել 52 ուսանող՝ անվճար և վճարովի հիմունքներով: Ավիաուսումնական կենտրոնի քոլեջում սովորում են 170 ուսանող:

## «Ավիաբուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

2010 թվականի ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 165 օդաչու, 130 բորտուղեկցորդ, 100 կարգավար, 10 կուրսանտ, 1800 վերգետնյա աշխատողներ, իրականացվել է 33000 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 1800 սանիտարական հետազոտություն:
Ֆինանսական միջոցների հաշվին արդիականացվել են ակնաբուժի կաբինետի և վերականգնողական կենտրոնի սարքավորումները, իրականացվել է ընկերության հիգիենիկ-ախտահամաճարակային ծառայության տեղամասի ընթացիկ վերանորոգում, համապատասխանեցնելով այն Հայաստանի Հանրապետության գործող սանիտարական նորմերին:
Մոսկվայում վերապատրաստվել է ընկերության ակնաբուժն ու ստացել ԲԹՓՀ ակնաբուժ-փորձագետի հավաստագիր:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2010թ. արձանագրվել է Հայաստանի Հանրապետության ավիացիայի արտադրական ցուցանիշների աճ: Հատկանշական է, որ ուղևորափոխադրումների ծավալների աճն արձանագրվում է 2005 թվականից՝ բացառությամբ 2009թ. 2,5% անկմանը: Այսպես, եթե 2005թ. նախորդ տարվա համեմատ ուղևորափոխադրումները աճել էին 2.5%, 2006թ.՝ 1.2%, 2007թ.՝ 19,9%, 2008թ.՝ 7,21%, իսկ 2010թ. այն կազմել է 13.3%: Բեռնափոխադրումների ծավալը աճել է 16.6%-ով:

**Աղյուսակ 1**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի 2007-2009 թվականների հիմնական արտադրական ցուցանիշներ**

| | Ցուցանիշի անվանումը | Չափի միավորը | 2007թ. | 2008թ. | 2009թ. | 2010թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Փոխադրված ուղևորներ | հազ.մարդ | 1405.6 | 1506.97 | 1469.35 | 1664,4 |
| 2 | Փոխադրված բեռ և փոստ | տոննա | 10010.2 | 10839 | 8406.6 | 8802 |
| 3 | Թռիչք-վայրէջքներ | հատ | 8119 | 8791 | 8892 | 10056 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր | չվերթ | 29155 | 32282 | 29622 | 32315 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի № 1523-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ N1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Միջոցառումների անվանումը | Միջոցառումների կատարման արդյունքները |
| 1 | 2 | 3 | 4 |
| Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 20 | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 22-ի «Քաղաքացիական ավիացիայի օդանավերով ուղևորների կողմից թռիչքի ընթացքում պահպանության փոխանցված զենքի և ռազմամթերքի փոխադրման կանոնները հաստատելու մասին» N 615-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կատարված է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 16.06.2010թ. N 843-Ն որոշում |

ՏԵՂԵԿԱՆՔ
# 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

| ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | | | |
|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակա խնդիրները | Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը |
| 1 | 2 | 3 | 4 |
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 51 | Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի տեղանքի էլեկտրոնային բազայի ստեղծման աշխատանքներ | ՀՀ ամբողջ տարածքի տեղանքի էլեկտրոնային բազայի ստեղծման աշխատանքների ապահովմանն ուղղված խնդրի լուծման շրջանակներում Գլխավոր վարչության կողմից ձեռնարկվել են քայլեր Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի տեղանքի էլեկտրոնային բազայի ստեղծման համար, որոնց արդյունքում «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2010թ. աշխատանքներն ավարտվել են և էլեկտրոնային բազան կիրապարակվի ՀՀ աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ: |
| Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 52 | Հայաստանի Հանրապետության փոքր ավիացիայի թռիչքների իրականացման ապահովում | ՀՀ փոքր ավիացիայի թռիչքների իրականացման ապահովման խնդրի շրջանակներում Գլխավոր վարչության կողմից ձեռնարկված քայլերի արդյունքում մշակվել և կազմվել է 1:500000 մասշտաբի աերոնավիգացիոն քարտեզներ, որոնք 2010 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել է Գլխավոր վարչության կողմից և կիրապարակվի ՀՀ աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ: |